

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԾԶԲ-21/38-3»**

ք. Երևան

«17» *փետրվար* 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկված հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **2 (երկու) տոկոսի չափով**:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության **0.19 (գրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով**:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով**:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հարկորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

²¹Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանսնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:
Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁵

7.16 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է
Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ՝ 02593108

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ 20
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 193004674290
ՀՎՀՀ 00840437

Է. Կիրակոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.



Մ. Նիկողոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ~~և~~ օրենսդրության շեղմանը հակասող դրույթներ:

²⁵ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի փաստապատկերը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄՆ ՓԱՄՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության								
Ձ/Հ	գտումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	Ձ/Մ	միավոր գինը մինչև	ընդհանուր գինը /մինչև/	ընդհանուր բանակը	մատակարարման	
							հասցեն	ժամկետը
3	50111130/515	<p>Ավտոմեքենայի <<Տոյոտա-Քենդրի>> վերանորոգում և տեխնիկական սպասարկում - Արտադրության տարեթիվը 2008թ.: Կատարողը պետք է իրականացնի SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցումը: Մեքենայի ընդհանուր համակարգչային դիագնոստիկա, շարժիչի ընթացիկ վերանորոգման, փոխանցման տուփի, սնման և արգելակման համակարգերի, ղեկային մեխանիզմի, ընթացային մասերի, էլեկտրասարքավորումների, բռնկման, սառեցման և օդափոխության համակարգերի վերանորոգման և բարձրորակ պահեստամասերով փոխարինման ծառայությունները, շարժիչի յուղը փոխելու, անտիֆրիզով, վառելիքա-քսուկային այլ նյութերով ապահովման, յուղի, բենզինի, օդի և սրահի ֆիլտրերը նորով փոխարինելու, ավտոմեքենայի անվարողերի տեղադրում և անիվների հավասարակշռում, ինչպես նաև մեքենայի ընդհանուր լվացում: Անհրաժեշտության դեպքում նաև թափքի վերանորոգման, դռների, փականների և ապակիների հետ կապված խնդիրների լուծման, իլացուցիչի վերանորոգման, մարտկոցով ապահովման աշխատանքների իրականացում: Ինչպես նաև անհրաժեշտությունից ելնելով այլ ծառայություններ: Բոլոր փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Պահեստամասերի փոխարինման ծառայության երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի: Պահեստամասերի փոխարինման ծառայության վայրը լինի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում</p>	500000	500000	1	Սեբաստիա-32	Օրենքով սահմանված կարգով պայմանագիրը (համաձայնագիր) ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.:	
5	50111130/517	<p>Ավտոմեքենայի <<Տոյոտա-Քենդրի>> վերանորոգում և տեխնիկական սպասարկում - Արտադրության տարեթիվը 2015թ.: Կատարողը պետք է իրականացնի SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցումը: Մեքենայի ընդհանուր համակարգչային դիագնոստիկա, շարժիչի ընթացիկ վերանորոգման, փոխանցման տուփի, սնման և արգելակման համակարգերի, ղեկային մեխանիզմի, ընթացային մասերի, էլեկտրասարքավորումների, բռնկման, սառեցման և օդափոխության համակարգերի վերանորոգման և բարձրորակ պահեստամասերով փոխարինման ծառայությունները, շարժիչի յուղը փոխելու, անտիֆրիզով, վառելիքա-քսուկային այլ նյութերով ապահովման, յուղի, բենզինի, օդի և սրահի ֆիլտրերը նորով փոխարինելու, ավտոմեքենայի անվարողերի տեղադրում և անիվների հավասարակշռում, ինչպես նաև մեքենայի ընդհանուր լվացում: Անհրաժեշտության դեպքում նաև թափքի վերանորոգման, դռների, փականների և ապակիների հետ կապված խնդիրների լուծման, իլացուցիչի վերանորոգման, մարտկոցով ապահովման աշխատանքների իրականացում: Ինչպես նաև անհրաժեշտությունից ելնելով այլ ծառայություններ: Բոլոր փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Պահեստամասերի փոխարինման ծառայության երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի: Պահեստամասերի փոխարինման ծառայության վայրը լինի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում</p>	500000	500000	1	Սեբաստիա-32	Օրենքով սահմանված կարգով պայմանագիրը (համաձայնագիր) ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.:	

ավտոմեքենայի անվարողերի տեղադրում և անիվների հավասարակշռում, ինչպես նաև մեքենայի ընդհանուր լվացում: Անհրաժեշտության դեպքում նաև թափքի

վերանորոգման, դռների, փականների և ապակիների հետ կապված խնդիրների լուծման, խլացուցիչ վերանորոգման, մարտկոցով ապահովման աշխատանքների իրականացում: Ինչպես նաև անհրաժեշտությունից ելնելով այլ ծառայություններ: Բոլոր փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Պահեստամասերի փոխարինման ծառայության երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի: Պահեստամասերի փոխարինման ծառայության վայրը լինի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ՝ 02593108

Է. Կիրակոսյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտերվիա» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ 20
Կոնվերթանկ ՓԲԸ
ՀՀ՝ 193004674290
ՀՎՀՀ՝ 00840437

Մ. Նիկողոսյան



(ստորագրություն)



Հավելված 1.1
 «17» 2021 թ. կնքված
 ԵՔ-ԳՀԾԶԲ-21/38-3 ծածկագրով պայմանագրի

Հ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չափաբաժնի անվանումը	
		Տոյոտա-Քեմրի 2015թ 5-րդ չափաբաժին	Տոյոտա-Քեմրի 2008թ 3-րդ չափաբաժին
1	Բռնկման համակարգի ստուգում	3,000	3,000
2	Կցորդման համակարգի ստուգում	3,000	3,000
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	3,000	3,000
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	3,000	3,000
5	ABS համակարգի ստուգում	3,000	3,000
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000
1.Շարժիչ			
8	Շարժիչի հանում և տեղադրում	90,000	90,000
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	200,000	200,000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	60,000	60,000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	60,000	60,000
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	2,000	2,000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	10,000	10,000
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	100	100
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	60,000	60,000
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	25,000	25,000
17	Շարժիչի մխցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	85,000	85,000
18	Ծնկաձև լիսեռի հղկում	10,000	10,000
19	Ծնկաձև լիսեռի փոխարինում	10,000	10,000
20	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	10,000	10,000
21	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	50,000	50,000
22	Ծնկաձև լիսեռի ուղղում	40,000	40,000
23	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	30,000	30,000
24	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	70,000	70,000
25	Շարժիչի բլոկի փոխարինում	155,000	155,000
26	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	50,000	50,000

27	Շարժիչի բլոկի հղկում	10,000	10,000
28	Մխոցի փոխարինում 1 հատ	100	100
29	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500
30	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500
31	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	500	500
32	Փոկանիվի փոխարինում	5,000	5,000
33	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	25,000	25,000
34	Շարժիչի շղթայի փոխարինում	95,000	95,000
35	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	10,000	10,000
36	Շարժիչի վանոսների փոխարինում	15,000	15,000
37	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	20,000	20,000
38	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	10,000	10,000
39	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	20,000	20,000
40	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	20,000	20,000
41	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	20,000	20,000
42	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	30,000	30,000
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	20,000	20,000
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	5,000	5,000
45	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	5,000	5,000
46	Յուղի ծորակի փոխարինում	1,000	1,000
47	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2,000	2,000
48	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմղիչ)		
49	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում		
50	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
51	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000
52	Ուղղորդիչ վանանների փոխարինում	1,000	1,000
53	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	80,000	80,000
54	Շարժիչի կափույրի փոխարինում	20,000	20,000
55	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	20,000	20,000
56	Մխոցամատի փոխարինում	10,000	10,000
57	Շարժիչի շարժաթևի փոխարինում	5,000	5,000
58	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	1,000	1,000
59	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	1,000	1,000
60	Ատամնանիվի փոխարինում	1,000	1,000
61	Ատամնանիվի փոկի փոխարինում	25,000	25,000
62	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	5,000	5,000
63	Սովարիկ փոխարինում	1,000	1,000
64	Շարժիչի կալունի փոխարինում	5,000	5,000
65	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	5,000	5,000
66	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	5,000	5,000
67	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	5,500	5,500

68	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	15,000	15,000
69	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	5,000	5,000
70	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	5,000	5,000
71	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	5,000	5,000
72	Շարժիչի գամասեղի փոխարինում	100	100
73	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	10,000	10,000
74	Գլխիկի հեղույսի փոխարինում	1,000	1,000
75	Ծնկածն լիսեռի հեղույսի փոխարինում	500	500
76	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	15,000	15,000
77	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	5,000	5,000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
78	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	500	500
79	Ավտոմեքենայի յուղում	2,000	2,000
80	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացում	15,000	15,000
81	Յուղի ռադիատորի փոխարինում	11,000	11,000
82	Յուղի ռադիատորի նորոգում	15,000	15,000
83	Յուղի գտիչի փականի փոխարինում	1,000	1,000
84	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
85	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
86	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	10,000	10,000
87	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	5,000	5,000
88	Վառելիքի փողրակի փոխարինում	5,000	5,000
89	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	18,000	18,000
90	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	5,000	5,000
91	Օդի գտիչի փոխարինում	500	500
92	Կոնդիցիոների գտիչի փոխարինում	2,000	2,000
93	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,000	3,000
94	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	1,000	1,000
95	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	1,000	1,000
96	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում	1,000	1,000
97	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
98	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ	20,000	20,000
99	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	30,000	30,000
100	Բոցամուղի կողավորում		
101	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	10,000	10,000
102	Բենզամղիչի փոխարինում	8,000	8,000
103	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	8,000	8,000
104	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ	3,000	3,000

	փոխարինում			
105	Բռնկման կարգավորում		3,000	3,000
106	CO կարգավորում		3,000	3,000
107	Ղեկավարման բյուրի հանում և տեղադրում կամ փոխարինում		5,000	5,000
108	Ղեկավարման բյուրի վերանորոգում		40,000	40,000
109	Վառելիքի բացի հանում և տեղադրում կամ փոխարինում		15,000	15,000
110	Վառելիքի բացի մաքրում		15,000	15,000
111	Արագարարի ոտնակի փոխարինում		5,000	5,000
112	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում		3,000	3,000
113	Օդի ծախսի տվիչի փոխարինում		2,000	2,000
114	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում			
115	Տրամյորի վերանորոգում			
116	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում		1,000	1,000
117	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում		3,000	3,000
118	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի փոխարինում		5,000	5,000
119	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի մաքրում		1,000	1,000
120	Յուղի ճնշման տվիչի փոխարինում		2,000	2,000
121	Տվիչի փոխարինում		1,000	1,000
3. Սառեցման և արտածման համակարգ				
122	Հովհարի փոխարինում		5,000	5,000
123	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում		3,000	3,000
124	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում		12,000	12,000
125	Ռադիատորի շրջանակի փոխարինում		2,000	2,000
126	Շերտափեղկի փոխարինում		5,000	5,000
127	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում		10,000	10,000
128	Ռադիատորի կալունակի փոխարինում		2,000	2,000
129	Ռադիատորի փողրակի փոխարինում		1,000	1,000
130	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում		18,000	18,000
131	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում		3,000	3,000
132	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում		12,000	12,000
133	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում		12,000	12,000
134	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում		20,000	20,000
135	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում		60,000	60,000
136	Ընդարձակող բացի փոխարինում		3,000	3,000
137	Ընդարձակող բացի փողրակի փոխարինում		2,000	2,000
138	Ջրի ծորակի փոխարինում		3,000	3,000
139	Հովացման հիդրոկցորդի փոխարինում		3,000	3,000
140	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում		1,000	1,000
141	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում		3,000	3,000
142	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում		500	500

143	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	55,000	55,000
144	Վառարանի ռադիատորի նորոգում	50,000	50,000
145	Վառարանի շարժիչի փոխարինում	12,000	12,000
146	Թերմոստատի փոխարինում	8,000	8,000
147	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	20,000	20,000
148	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	1,000	1,000
149	Գեներատորի փոկի փոխարինում	3,000	3,000
150	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	5,000	5,000
151	Ջրի ռադիատորի վերանորոգում	70,000	70,000
152	Թերմոստատի միջադիրի փոխարինում	1,000	1,000
153	Սառեցման համակարգի օդահանում	1,000	1,000
154	Խլարարի գոֆրայի փոխարինում	11,000	11,000
155	Կատալիզատորի հանում	15,000	15,000
156	Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	3,000	3,000
157	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
158	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	3,500	3,500
159	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	500	500
160	Խլարարի ներդիրի փոխարինում	2,500	2,500
161	Խլարարի կախոցի փոխարինում	600	600
162	Կալունակի փոխարինում	100	100
163	Ռեզոնատորի փոխարինում	16,000	16,000
164	Հովացման հեղուկի փոխարինում	4,000	4,000

4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ

165	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում		
166	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները		
167	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում		
168	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում		
169	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում		
170	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում		
171	Կցորդման երկժանիի փոխարինում		
172	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները		
173	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում		
174	ՓՏ-ի փոխարինում		
175	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում		
176	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում		
177	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում		
178	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում		
179	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում		

180	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում			
181	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում			
182	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում			
183	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում			
184	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում			
185	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում			
186	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում			
187	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում			
188	ՓՏ-ի բարձիկի փոխարինում		5,000	5,000
189	ՓՏ-ի փոխանցման ծակի փոխարինում			
190	ՓՏ-ի յուղի փոխարինում			
191	Վազքաչափի շարժաբերի փոխարինում		5,000	5,000
192	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները		210,000	210,000
193	ԱՓՏ-ի հավաքածույի փոխարինում		50,000	50,000
194	ԱՓՏ-ի փոխարինում		80,000	80,000
195	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում		10,000	10,000
196	ԱՓՏ-ի կոնվերտների հանում և տեղադրում կամ փոխարինում		100	100
197	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում		40,000	40,000
198	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում		20,000	5,000
199	ԱՓՏ-ի սուլենոիդների փոխարինում		40,000	40,000
200	ԱՓՏ-ի համակարգչի և սուլենոիդների փոխարինում		40,000	40,000
201	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում		10,000	10,000
202	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում		10,000	10,000
203	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում		40,000	40,000
204	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում		5,000	5,000
205	ԱՓՏ-ի հիդրոազույցի փոխարինում		32,000	32,000
206	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում		12,000	12,000
207	ԱՓՏ-ի յուղի փոխարինում		5,000	5,000
208	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով		20,000	20,000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
209	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները		53,000	53,000
210	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում		30,000	30,000
211	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում		16,000	16,000
212	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում		5,000	5,000
213	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում		5,000	5,000
214	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում		11,000	11,000
215	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում		11,000	11,000
216	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում		16,000	16,000
217	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում		8,000	8,000
218	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում		6,000	6,000

219	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	2,000	2,000
220	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	5,000	5,000
221	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	5,000	5,000
222	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	3,000	3,000
223	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,000	3,000
224	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	8,000	8,000
225	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
226	Տվիչի փոխարինում	500	500
227	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	5,000	5,000
228	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
229	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	10,000	10,000
6. Առջևի և հետևի կամրջակներ			
230	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	27,000	27,000
231	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	16,000	16,000
232	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	11,000	11,000
233	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	16,000	16,000
234	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000
235	Կամրջակի յուղի փոխարինում	2,000	2,000
236	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
237	Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	16,000	16,000
238	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	500	500
239	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	6,000	6,000
240	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	60,000	60,000
241	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	40,000	40,000
242	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	30,000	30,000
243	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	11,000	11,000
244	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	11,000	11,000
245	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	11,000	11,000
246	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
247	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	5,000	5,000
248	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	26,000	26,000
249	Կամրջակի տվիչի փոխարինում	500	500

250	Կամրջակի իրանի փոխարինում (չուլուկ)	50,000	110,000
251	Կամրջակի յուղի փոխարինում	2,000	2,000
7. Կախոց			
252	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	40,000
253	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
254	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	12,000	12,000
255	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
256	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
257	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	12,000	12,000
258	Անվակունդի գամաստեղի և հեղույսի փոխարինում(մեկ անիվի համար)	5,000	5,000
259	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000
260	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000	5,000
261	Առջևի զսպանակի փոխարինում	10,000	10,000
262	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
263	Պնևմոնցնամեղմիչի փոխարինում	8,000	8,000
264	Պնևմոնցնամեղմիչի բարձիկների փոխարինում	8,000	8,000
265	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	3,000	3,000
266	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
267	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	10,000	10,000
268	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	10,000	10,000
269	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	6,000	6,000
270	Անիվների պաշտպանիչի փոխարինում	3,000	3,000
271	Ծարժիչի պաշտպանիչի փոխարինում	3,000	3,000
272	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
273	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	10,000	10,000
274	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	10,000	10,000
275	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	3,000	3,000
276	Գնդե հողակապի պատյանի փոխարինում	1,000	1,000
277	Գնդե հողակապի փոխարինում	8,000	8,000
278	Գնդե հողակապի նորոգում	15,000	15,000
279	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7,000	7,000
280	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4,000	4,000
281	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	4,000	4,000
282	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	4,000	4,000
283	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	10,000	10,000
284	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	4,000	4,000
285	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	4,000	4,000
286	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում	1,000	1,000
287	Հետևի զսպանակների փոխարինում	8,000	8,000
288	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000

289	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
290	Զսպանի փոխարինում		
291	Զսպանի վռանների փոխարինում 1 հատ		
292	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	15,000	15,000
293	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	2,500	2,500
294	Հետևի կախցի սայլենտ-բլոկի սպասարկում	6,500	6,500
295	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	5,500	5,500
8. Ղեկային մեխանիզմ			
296	Ղեկասյունակի(կոլոնկա) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	50,000	50,000
297	Ղեկասյունակի(կոլոնկա)արորիկի փոխարինում	5,000	5,000
298	Ղեկասյունակի (կոլոնկա) առանցքային սոնու փոխարինում	5,000	5,000
299	Ղեկասյունակի(կոլոնկա խաչուկի փոխարինում	5,000	5,000
300	Ղեկասյունակի(կոլոնկա)վերանորոգման հավաքածույի փոխարինում	15,000	15,000
301	Ղեկասյունակի(կոլոնկա) քանդում, արատավորում, հավաքում	15,000	15,000
302	Ղեկասյունակի(կոլոնկա)կարգավորում	3,000	3,000
303	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	5,000	5,000
304	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	10,000	10,000
305	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի փոխարինում	10,000	10,000
306	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի նորոգում	8,000	8,000
307	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	5,000	5,000
308	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	8,000	8,000
309	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	12,000	12,000
310	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	3,000	3,000
311	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	10,000	10,000
312	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	8,000	8,000
313	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	8,000	8,000
314	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	5,000	16,000
315	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
316	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	5,000	5,000
317	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	0	0
318	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,500	5,500
319	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	15,000	15,000
320	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	21,000	21,000
321	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,500	2,500

322	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	5,000	5,000
323	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	3,000	3,000
324	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	8,000	8,000
325	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,500	5,500
326	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	4,500	4,500
327	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
328	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	7,000	7,000
329	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	5,000	5,000
330	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	2,000	2,000
9. Արգելակային համակարգ			
331	Վակումային ուժեղարարի փոխարինում	12,000	12,000
332	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	3,500	3,500
333	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
334	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	11,000	11,000
335	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
336	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	4,500	4,500
337	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
338	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
339	Առջևի սուպպորտի վերանորոգում	10,000	10,000
340	Հետևի սուպպորտի վերանորոգում	10,000	10,000
341	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	6,000	6,000
342	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	3,000	3,000
343	Արգելակային փողոակի փոխարինում	3,000	3,000
344	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5,000	5,000
345	Արգելակային համակարգի օդահանում	3,000	3,000
346	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5,000	5,000
347	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	6,000	6,000
348	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	10,000	10,000
349	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	9,000	9,000
350	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում 1 հատ	10,000	10,000
351	Հետևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ	9,000	9,000
352	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
353	ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
354	ABS-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր	30,000	30,000

	աշխատանքները		
355	ABS-ի տվիչի փոխարինում	5,000	5,000
356	ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում	15,000	15,000
357	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
358	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	8,000	8,000
359	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում	8,500	8,500
360	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
361	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	15,000	15,000
362	Հետևի արգելակների կարգավորում	8,000	8,000
363	Արգելակային համակարգի լվացում	5,000	5,000
364	Արգելակային հեղուկի փոխարինում	3,000	3,000
10. էլեկտրասարքավորում			
365	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
366	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	8,000	8,000
367	Գեներատորի ստատորի փոխարինում	6,000	6,000
368	Գեներատորի ռոտորի փոխարինում	6,000	6,000
369	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	6,000	6,000
370	Գեներատորի դիողային կամրջակի փոխարինում	6,000	6,000
371	Գեներատորի առանցքակալի փոխարինում	6,000	6,000
372	Գեներատորի փոկանիվի փոխարինում	6,000	6,000
373	Հագոցի հարվածամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000	2,000
374	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	6,000	6,000
375	Մեկնարկիչի խարխուխի փոխարինում	3,000	3,000
376	Մեկնարկիչի իրանի փոխարինում	3,000	3,000
377	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	3,000	3,000
378	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	3,000	3,000
379	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	3,000	3,000
380	Մեկնարկիչի հետևի կախույրի փոխարինում	2,000	2,000
381	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	3,000	3,000
382	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	3,000	3,000
383	Մեկնարկիչի պատյանի փոխարինում	3,000	3,000
384	Ազդանշանի կարգավորում	3,000	3,000
385	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
386	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000	4,000
387	Հակամշուշային լապտերի տեղադրում	6,000	6,000
388	Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում	6,000	6,000
389	Սարքերի պանելի հանում և տեղադրում	60,000	60,000
390	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,000	3,000
391	Առջևի լապտերների կարգավորում	4,000	4,000

392	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	6,000	6,000
393	Բռնկման կողպեքի հպակի փոխարինում	6,000	6,000
394	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	3,000	3,000
395	Ինդուլցիոն կոճի հանում և տեղադրում	15,000	15,000
396	Լուսամփոփի լարերի փոխարինում	3,000	3,000
397	Լուսամփոփի լարերի նորոգում	2,000	2,000
398	Վազքաչափի փոխարինում	7,000	7,000
399	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	11,000	11,000
400	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	6,000	6,000
401	Ապակեվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	100	100
